Անուշավան Պետրոսյան
Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ» ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔԱՆԱՔԵՌՑԻՆԵՐԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

«Ես մաքուր խղճով խոսք եմ տալիս՝
չհորինել ոչինչ, ինչ որ ճիշտ է, այլ գրել»
Խ. Աբովյան

Չնայած բնակարանների վերաբերյալ ազգագրական հարուստ գրականության առկայությանը՝ մինչև 20-րդ դ. երկրորդ կեսը ինչպես կովկասագիտության, այնպես էլ ընդհանուր ազգագրական ուսումնասիրությունների մեջ դեռևս հստակեցված չէին միասնական տիպաբանության սկզբունքներն ու ուսումնասիրության մեթոդները: Դրանք առաջ քաշվեցին միայն 1980-ական թվականներին:

Բնակարանը որպես պատմական կատեգորիա, ի սկզբանե ունեցել է մարդկանց միավորելու և բաժանելու գործառույթներ: Ընտանիքի տիպերն ու կառուցվածքը, էթնիկական ավանդույթները, տնտեսական զարգացման մակարդակը ազդել են բնակարանը փոփոխելու գործընթացի վրա և պայմանավորել բնակարանի տիպերը, օգտագործվող շինարարական նյութը, մեծ բնակարանների տրոհումը և այլն: Մարդկային հարաբերությունների բնույթը, նահապետական ընտանիքների քայքայումը, սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, նոր հարաբերությունները բնակարանի ու նրա օժանդակ համակառույցների նկատելի փոփոխություններ առաջ բերեցին[1]:

Մեզանում առաջին անգամ Խ. Աբովյանն իր հայրական տան օրինակով փորձել է ներկայացնել Քանաքեռի ժողովրդական տունը, որը «... հեղինակի մանկական հուշերի մի մասն է միայն ... պատրաստված Դորպատում, 1834-1835 թթ. ընթացքում»[2]: Աշխատության նյութերը կարելի է ներկայացնել երկու հիմնահարցերի շրջանակներում:

Ա. **Քանաքեռի ժողովրդական տան և օժանդակ կառույցների համառոտ ակնարկ.** – Խ. Աբովյանի վկայությունների համակարգումը հնարավորություն է տալիս որոշ պատկերացում կազմել 19-րդ դ. առաջին կեսի Քանաքեռի ժողովրդական տան ու օժանդակ կառույցների կապի, դասավորվածության, գործառույթների, կիրառված շինարարական հմտությունների և այլնի մասին: Հեղինակի վկայությամբ Քանաքեռում յուրաքանչյուր ընտանիք 3-4 սենյակ ուներ, որոնց մի մասը ծառայում էր որպես բնակելի, մյուսը՝ մթերքների ու անասունների համար: Տունը լինում էր պարսպապատ կամ առանց պարսպի: Բնակելի տունը (**թոնրատուն, հացատուն**) առանձնանում էր նրանով, որ ավելի մեծ էր ու ընդարձակ, բարձր դիրքով, կառուցված մյուս տների մեջտեղը՝ քառակուսի հատակագծով[3]: Բնակելի տան միայն կենտ-

---

[1] Տե՛ս Культура жизнеобеспечения и этнос, Ереван, 1983, стр. 150-153:

[2] **Խ. Աբովյան**, Գյուղական տների կառուցվածքը, Երկեր, Երևան, 1984, Ծանոթագրություններ, էջ 717-718: Աշխատանքի առաջին մասը Խ. Աբովյանը նվիրել է Քանաքեռի ժողովրդական տանը, իսկ երկրորդ մասը վերնագրել է «Կենցաղ»: Բնակարանի վերաբերյալ շատ նկարագրություններ հեղինակը տվել է այս բաժնում:

[3] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 555:

ռոնն էր լուսավորված, անկյունները շատ մութ էին, քանի որ լուսամուտներ չկային: Լույսը ներս էր ընկնում տանիքի կենտրոնում եղած երդիկից, որը վերևում ուռուցիկ էր: Տան պատերի հաստությունը զգացվում էր ներս մտնելուց հետո միայն[1]: **Հացատանը** տեղադրված են մեծ ու փոքր թոնիրներ՝ դռնից ոչ հեռու, պաշտպանված բարձր ու երկար կիսապատով, կանխում էր ցրտի՝ անմիջապես ներս թափանցումը: Մեծ թոնիրում վառում էին փայտ կամ աթար: Ներսի ծխից կարելի էր խեղդվել: Օրվա ճաշերը եփում էին փոքր թոնրի վրա: «Դրա համար կա երկար մի ձող,- գրում է նա,- բավական հաստ և այնքան երկար, որ թոնրի մի ծայրից մյուսն է անցնում, կա նաև մի փոքր ձող, որը կարելի է ցանկության դեպքում աջ կամ ձախ շարժել»[2]: Ցերեկվա կերակուրները եփում էին լրիվ: Երեկոյան ամանները կիսով չափ իջեցնում էին թոնրի մեջ, ժամանակ առ ժամանակ ջուր ավելացնում: Թոնիրն ունի կավից պատրաստված կափարիչ՝ ունկերով, որով շարժում էին այն[3]:

Նույնքան ուշագրավ ու անթերի են Խ. Աբովյանի այն վկայությունները, որոնք վերաբերում են հայ իրականության մեջ լայն կիրառություն ունեցած **սեղան-քուրսու** նկարագրությանը: «Թոնիրը կիսով չափ կամ ամբողջովին ծածկում են,- գրում է նա,- վրան դնում փայտյա սեղան, վրան ծածկում, որ տաքությունը ներսում մնա: Թոնրի շուրջ եղած խսիրների վրա գորգեր են գցված: Խսիրները պատրաստում են եղեգից, որը բերում են Արարատյան դաշտից: Այն տներում, որոնց հատակը տախտակապատ չէ, օգտագործում են խսիրը և վրան գորգ փռում»[4]:

Ընտանիքի բոլոր անդամները նստում էին այս սեղանի շուրջ, որը կոչվում էր **քուրսի**, ոտքերը և ձեռքերը ներս են երկարում և տաքանում[5]: Խ. Աբովյանը վկայում է, որ քուրսու շուրջը ընտանիքի հայրը իր հատուկ տեղն ուներ, որը հաճախ դատարկ էր մնում, իսկ եթե որևէ մեկը նստած էր, նրա երևալուց պետք է վեր կենար: Ինչպես ընտանիքի հայրը, այնպես էլ մյուսները ունեին իրենց տեղերը քուրսու շուրջը, որն ընդհանրական է եղել հայ ընտանիքների համար: Առավոտյան և երեկոյան ընտանիքը ճաշում էր քուրսու սեղանի վրա, միայն հարազատներին ու մտերիմներին էին ընդունում այդ սենյակում: «Եթե ճաշելիս որևէ մեկը ներս մտնի, ընդունված չէ, որ ընտանիքի անդամներից մեկը վեր կենա, մինչև իսկ երեխաները»[6]: Քուրսու շուրջը,- շարունակում է Խ. Աբովյանը,- անկողինները գցում էին կողք-կողքի, հավասար շարքով: Ներքնակը բամբակից պարկ էր, երբեմն լցնում էին նաև բրդով: Վերմակի երեսը ներքնակից տարբերվում էր նրանով, որ բազմագույն էր և ծաղիկներով նախշված: Բարձը մեծ էր՝ լցված բամբակով, բրդով կամ **փետուրով**: Բոլորի ոտքերն ուղղվում էին դեպի քուրսին, հաճախ նրա տակը[7]: Ակնհայտ է, որ թոնրատունն ունեցել է բազմաֆունկցիոնալ գործառույթներ՝ կազմելով բնակարանի ամենակարևոր բաժիններից մեկը: Նրա վկայությամբ «կահ-կարասին կարելի է տեսնել միայն այնտեղ և ոչ ուրիշ տեղ: Դռան մոտ, դռնից մի փոքր հեռու, դրված է մի մեծ, երկարավուն քար և նրա վրա դրված կավից երկու-երեք կուլա՝ լիքը ջրով: Քարի մեջ կուլաների համար խոր փոսեր են փորված, որտեղ դրվում են դրանք: Սենյակի մի անկյունում կարելի է տեսնել դիզած ցորեն, որը ընտանիքի տարեկան պակի մի անկյունում կարելի է տեսնել դիզած ցորեն, որը ընտանիքի տարեկան պաշարն է»[1]: Խ. Աբովյանը մանրակրկիտ նկարագրում է թոնրատան-հացատան ներսույթը. «կողքի պատերի մեջ չորս սյուներից մեկի վրա դրված են տախտակներ, որոնց վրա դարսված է մի քանի ձեռք անկողին: Գիշերն օգտագործում են, իսկ առավոտյան նորից դնում այնտեղ»[2]: Սյուներից և պատերից կախված են մաղեր, հրացաններ, դանակներ, գերանդիներ, խմոր պատրաստելու պարագաներ, գրդնակ և այլ իրեր: Այստեղ է պահվում նաև թխված հացը, կա նաև մի ճախարակ: «Այստեղ միայն մեծերն են քնում՝ մեծ ու փոքր երեխաների և իրենց կանանց հետ, թվով հաճախ 10-15 մարդ»[3]: Թոնրատան այս նկարագիրը եզակի է ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, այլև՝ մասնագիտական, ընդգծելով դրա գործառույթները:

Խ. Աբովյանը նույնպիսի մանրամասնությամբ նկարագրում է թոնրատան ծածկը: Կտուրը նստած է մեծ մասամբ հղկված, երկար ու հաստ գերանների վրա, որոնց ծայրերը զուգահեռ կերպով մի պատից մտնում են մյուսը: Ծածկի վրա գցում են մշակված տախտակներ՝ կողք-կողքի, չքավորների բնակարաններում դրանք մշակված չեն լինում, իսկ տախտակների վրա փռում են եղեգից **խսիր**: Բնակարանի **կտուրը** սվաղում են կավահողից ու բարակ ծղոտից պատրաստված հաստ շաղախով, որի շնորհիվ երդիկը քիչ-քիչ բարձրանում է տանիքից: Ջուրը հեռացնելու նպատակով մեկ-երկու տեղ դնում են փայտից կամ քարից պատրաստված ջրհորդաններ (**չռիկ**), որոնցով ջրերը հեռացնում են բակ կամ դաշտ: Չնայած անձրևների ժամանակ ջրերն արագ հոսում են ջրհորդաններով, սակայն մի մասը ներծծվում է տանիքի սվաղի մեջ: Տան կտուրի ծածկը մի քանի տարին մեկ նորոգում են, պատերը դրսից ու ներսից սվաղում[4]:

Տան պատերի մեջ, մի քանի տեղերում, թողնում էին մեծ խորշեր՝ զանազան իրեր դնելու նպատակով, ուստի դրանք ծառայում էին որպես պահարաններ[5]: Տունը շրջապատված էր լինում պարսպով, երբեմն առանց պարսպի: Պարսպի կառուցման, շինարարական տեխնիկայի, հումքի և աշխատանքային գործիքների մանրամասները նկարագրել է Խ. Աբովյանը: Պարիսպը կառուցում էին առանց հիմքի, ուղղակի գետնի վրա, իսկ շաղախը պատրաստում էին գետաքարերից և սովորական կավահողից: Առանց վարպետի պարիսպ չէին կառուցում, օգտագործում էին ուղղալար և երկաթե մի գործիք, որով սվաղում էին ցեխը, սակայն «այս գործիքի բոլոր առանձնահատկությունները նշել չեմ կարող, գործածում են փայտյա կամ երկաթե բահեր»[6]: Այս ամենի շնորհիվ պարիսպն ունենում էր բավական հավասար և կանոնավոր տեսք՝ չնայած քարերի անհամաչափությանը:

---

[1] Նույն տեղում, էջ 556: Խ. Աբովյանի տուն թանգարանի համալիրում պահպանված հին տան պատերի հաստությունը հեղինակի խոսքերի իրեղեն ապացույց կարելի է համարել:

[2] Խ. Աբովյանը նկատի ունի թոնրի վրա դրվող **խաչերկաթը**, որն այսօր ևս գործածական է հեռավոր գյուղերի բնակչության կենցաղում:

[3] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 567:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 568:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, էջ 569:

[1] Նույն տեղում, էջ 568:

[2] Նույն տեղում, էջ 569:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 557:

[5] Նույն տեղում: **Մեծ խորշերը** հայտնի **պատրհաններ էին**, որ բացի վերոհիշյալ գործառույթներից ծառայել են մեծ ընտանիքների անկողինները դնելուն և հայտնի են **ծալքատեղ** անունով (տե՛ս **Վ. Բդոյան**, Հայ ազգագրություն), էջ 74:

[6] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 556: Հասկանալի է, որ հեղինակը «մի գործիքի» անվան տակ նկատի ունի շինարարության մեջ հնուց ի վեր հայտնի և առ այսօր կիրառվող **մալան**, որը գործածական է ինչպես պատ շարելիս, այնպես էլ սվաղ անելիս:

Ըստ Խ. Աբովյանի պարսպի պատերի երկու կողմերը՝ ներսից ու դրսից, շարում էին մեծ քարերով, իսկ պատերի արանքը լցնում ցեխից ու մանր քարերից պատրաստված շաղախ[1]: Այն վայրերում, որտեղ քար չկար, պարիսպի պատերը կառուցում էին հում (չթրծած) աղյուսով: Ցեխը պատրաստում էին կավահողի և ծղոտի շաղախից (հարդախառը կավ), մի քանի օր թողնում, որ «նստի», որից հետո պարիսպի պատերը սվաղում էին դրսից ու ներսից: Սվաղելուց հետո պատերը բավական սպիտակ էին լինում, սակայն հետո գունաթափվելով՝ դառնում էին գորշ, մեծ մասամբ սև[2]:

Խ. Աբովյանը մանրամասնորեն նկարագրում է բնակելի տան համակառույցի մեջ մտնող **հյուրասենյակը**: Այն կառուցված էր տանն անմիջապես կից, որի դուռը սովորաբար բացվում էր բակից, բնակելի տան հետ բացի մի լուսամուտից, այլ կապ չուներ: Սենյակի և հյուրասենյակի միջև եղած խոսակցությունները չէին կարող լսվել: Հյուրասենյակն ուներ երկու մեծ լուսամուտ՝ շրջանակով ու թղթով պատված, քանի որ «ապակին մեզ մոտ թանկագին ապրանք է»: Թղթին հալած յուղ էին քսում, որը նպաստում էր լույսի ավելացմանը[3]: Հյուրասենյակն ուղղանկյան տեսք ուներ, բավական լայն էր, պատերի մեջ կային շատ խորշեր: Ներս մտնողի ուղիղ դիմացը, հանդիպակաց պատի մեջ, կառուցված էր **բուխարին** (կրակնոց) և ամբողջ հյուրասենյակը կահավորված էր մեծ ճաշակով: Բուխարին ուներ բարձր կամար, որի շնորհիվ ծուխը սենյակ չէր լցվում: Ինչպես բուխարին, այնպես էլ սենյակը սվաղում էին գաջով, բուխարու շուրջն անում նախշազարդեր, որոնք «աչքի համար հաճելի են»[4]: Սակայն նման ճոխ հյուրասենյակ ունեին միայն հարուստ մարդիկ, չքավորներն այդ նպատակի համար օգտագործում էին նույն ոճով կահավորված փոքր սենյակ, որտեղ ընդունում էին հյուրերին: Քանի որ գյուղացիներն անասուն քիչ էին պահում, գոմերը մաքուր էին և մեծ անհարմարություն չէր լինում: Միայն ձմռանն էին անասուններին այնտեղ թողնում, տարվա մյուս եղանակներին ընտանիքի անդամները «բաց օդի մեջ են լինում»[5]: Գյուղացիները մեծամեծերին այստեղ էին ընդունում ձըմռանը, իսկ ամռանը բնակվում էին իրենց այգիներում: Պատահական չէ, որ որոշ ազգագրական շրջաններում հյուրասենյակը **ամառնատուն** էր կոչվում[6]:

Մառան կամ մրգերի պահեստ, որտեղ Խ. Աբովյանի վկայությամբ, պահվում էին գյուղացու ձեռք բերած ողջ մթերքները, միաժամանակ նորապսակների համար ծառայում էր որպես ննջարան: Մառանը երկար սենյակ էր, ուներ մի մուտք, երկու փոքր լուսամուտ և բնակելի շենքից ամբողջովին առանձնացված էր: Ամառվանից այստեղ «բուրում է անուշահոտություն»: Տարբեր մրգեր շարված էին **մի շարանի վրա**, որ երկար, բարակ **ծիպոտ էր**[7], որի վրա շարում էին ձմեռվա համար նախատեսված մրգերը և կախում: Առաստաղի գերանները մտածված կերպով իրար մոտ էին անում, սենյակի լայնությամբ, ամեն մեկի վրա ամրացված մեխերի խիտ շարք, որից կա-

[1] Շաղախը հայտնի է **ծուռ** անունով (տե՛ս **Ա. Պետրոսյան**, ԴԱՆ, տետրեր 1-10, Երևան, 1970):
[2] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 556:
[3] Նույն տեղում, էջ 557:
[4] Նույն տեղում, էջ 558:
[5] Ամառանը տունը բոլորովին բաց էր՝ գույքով հանդերձ, տան ու դարպասի դռները չէին փակում, բայց «բոլորը ապահով են: Եթե հարևանին որևէ բան է պետք, մտնում վերցնում է, հետո տեղյակ պահում» (տե՛ս **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 366-367):
[6] **Վ. Բդոյան**, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 83:
[7] **Շար-ծիպոտն** այգեգործական շրջաններում հայտնի է **պտուղների կախան** անունով (տե՛ս **Ա. Պետրոսյան**, Դաշտային ազգագրական նյութեր, (այսուհետ՝ ԴԱՆ), տետրեր 1-10, Երևան, 1970):

խում էին մրգերի շարանը՝ ամեն տեսակն առանձին: Դրանք ամիսներով մնում էին կախված, մրգերը շարից պոկում էին ձեռքով: «Հյուրերը հյուրասիրվում էին այդ սենյակում, քնում այնտեղ և ազատ վայելում ներսի բարիքները»: Հենց մառանի մուտքի մոտ շարված էին 15-20 գինու կարասներ, որոնցից յուրաքանչյուրի տարողությունը 20 լիտր էր: Ընտանիքի անդամները դիտավորյալ մառան չէին մտնում, որ հյուրերն անկաշկանդ օգտվեն ներսի բարիքներից: Մառանում եղած մրգերը միայն անձնական օգտագործման համար էին, մինչև իսկ երեխաներն ազատ մտնում էին այնտեղ[1]:

Հյուրասենյակի պատերի մեջ ևս բացված էին շատ խորշեր, որոնք ծառայում էին որպես պահարան: Այնտեղ էին պահվում ընտանիքի անդամների զգեստները, արժեքավոր իրերը: «Իմ հայրը,- գրում է Խ. Աբովյանը,- այստեղ ընդունեց իմ բարեկամ, պետական խորհրդական Պարրոտին՝ իր ուղեկիցներով», առանց նրա հետ խոսել կարողանալու (թարգմանիչը ես էի): Հյուրն ասաց, թե նա պետք է ուրախ լինի, որ լավ որդի ունի: «Իմ որդին, իմ տունը քոնն են,- պատասխանեց հայրս,- քո ոտքը բախտավորեց իմ շեմքը: Ես ձեր բոլորի ծառան եմ, մենք երբեք ազգից այսպիսի հյուրեր չենք տեսել»[2]:

Խ. Աբովյանը երախտագիտությամբ հիշելով Պարրոտի խաղացած դերն իր կյանքում, գրել է. մի գիշերվա փոխարեն, նա որպես **ուսուցիչ, դաստիարակ**, խնամել ու ուսուցանել է ինձ, մարդկանց մեջ մտցրել, «հայրական ձեռքով սրբել է իմ արցունքները, որոնց պատճառը հարազատներից բաժանվելն էր»[3]: Խ. Աբովյանն իր ուսուցչի մասին, խոսքն ավարտում է հետևյալ տողերով. «Ես նրա և նրա հարգարժան ընտանիքը սիրել եմ ինչպես մի երեխա և միևնույն հավատարմությունը ինձ հետ կտանեմ մինչև գերեզման»[4]:

Չնայած հակիրճ, սակայն Խ. Աբովյանը որոշ նկարագրություններ ունի **գոմի** մասին: Այն կառուցված է «շատ նպատակահարմար ձևով, նույն շաղախով», փայտե սյուներով անջատված են առանձին անասունների տեղերը: Պատերի մեջ անցքեր են արված՝ վերևում սրածայր, ներքևում անհամեմատ լայն: Մի մեծ գերան ծառայում է որպես հենարան և պաշտպանում է պատը, որի վրայով անասունները երկարացնում են իրենց գլուխները և ուտում կերը: Եթե անասունները շատ են, գոմում նրանց երկու կողմերից են կապում, գավակը ուղղելով դեպի կենտրոն, որտեղ միջանկյալ տարածություն կա և կարելի է ազատ անցնել[5]:

Գոմից ոչ հեռու կամ նույն շարքում,- գրում է Խ. Աբովյանը,- կա մի **ընդարձակ սենյակ**, որտեղ խոտն ու հարդն են պահում: Հասկանալի է, որ խոսքը **մարագի մասին է**, որը կազմել է ավանդական բնակարանային համակառույցի կարևոր բաղկացուցիչը[6]: Անասունների կերը բերում էին մեծ կողովներով՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան, երեք-չորս ամիս խնամում էին գոմում՝ մեծ հոգատարությամբ: Ավարտե-

[1] Նույն տեղում:
[2] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 560:
[3] Նույն տեղում: Մի ուրիշ առիթով Խ. Աբովյանը գրել է. տասը տարեկանից «ինձ բաժանեցին ընտանիքից և վանք բերեցին, ինձ համար ցավալի էր այդ բաժանումը», էջ 574:
[4] Նույն տեղում, էջ 561:
[5] Նույն տեղում, էջ 558:
[6] Նույն տեղում, էջ 559: Ըստ Վ. Բդոյանի մարագը պահպանել է «կիսագետնափոր և գետնափոր տան հնագույն ձևերը: Լանջային տեղում մարագը երեք կողմերով մխրճվում էր հողի մեջ, թիկունքից բացված լուսամուտից էլ հարդը դյուրությամբ լցնում են ներս: Ծածկը երկնավ կամ քառանավ էր, որից առաջացած թեքությունն ապահովում էր կաթիլքից» (տե՛ս **Վ. Բդոյան**, նշվ. աշխ., էջ 83):

լով Քանաքեռի ժողովրդական բնակարանի և դրա համակառույցի վերաբերյալ շարադրանքը Խ. Աբովյանն ամփոփում է. «Մենք չափով ծանոթացանք իմ հայրենակիցների բնակարաններին, որոնք զուրկ են եվրոպական հարմարություններից»[1]:

Բ. **Քանաքեռցիների ավանդական կենցաղը**. - «Կենցաղ» բաժնում Աբովյանի գրառած նյութերն ու հաղորդած տեղեկությունները կարելի է բաժանել ընտանեկան, տնտեսական կենցաղ և ժողովրդական հավատալիքներ ոլորտների:

ա) **Ընտանեկան կենցաղ**: Մասնագիտական, գյուղագրական և գեղարվեստական գրականության մեջ, եղած վկայությունների համաձայն, 19-րդ դ. առաջին կեսին հայ իրականության մեջ դեռևս բավական կենսունակ էին գերդաստանական մնացուկները, որոնց գրառումն ու կորստից փրկելու անհրաժեշտությունը լավ էր գիտակցում Խ. Աբովյանը: Այդ գրառումներն ունեն աղբյուրագիտական արժեք՝ վերականգնելու քանաքեռցիների ավանդական կենցաղը 19-րդ դ. առաջին կեսի կտրվածքով:

Խ. Աբովյանը նկարագրել է **մեծ ընտանիքի** կազմը, անդամների փոխհարաբերությունները, ավագության կարգը, նահապետի անսահմանափակ իշխանությունը, տընտեսական հարաբերությունները կանոնակարգող սովորութային իրավունքի նորմերը: Ընտանիքում եղբայրների ընդհարման դեպքում,- գրում է նա,- ծերունին հանդիմանում էր, ասելով. «Միթե իզուր եմ քեզ մինչև այս հասակը հասցրել, որ դու մեր ծերությունը դառնացնես»...: Եղբայրները երդվում էին, որ այլևս նման բան չեն անի, համբուրում էին նրա ձեռքը, սակայն նահապետը դառնացած շարունակում էր. «Աստված իր օրհնությունը իմ տանից վերցրել է... լսվա՞ծ բան է, որ որդին իր հոր հանդեպ անհնազանդ լինի, իմ տան վրա անեծք կա»[2]: Ուշագրավ է, որ Խ. Աբովյանը բերում է իր անձնական օրինակը: Երբ ութ տարեկան էի, ծեծեցի իմ փոքր եղբորը, հայրս քարը ձեռքին մոտեցավ ինձ, իսկ մայրս հասկացրեց, որ փախչեմ: «Ամբողջ գիշեր ես դրսում մնացի, «երբ ամեն ինչ անցավ, հայրս հանդարտվեց, ասաց. «Զավակս, քո պատճառով որդեսպան պիտի լինեի»[3]: «Տանը,- գրում է Խ. Աբովյանը,- ոչ մի բան բաժանված չէ, ամեն ինչ ընդհանուր է: Ամեն ինչ ծերունիների ձեռքում է, հագուստ գնելը, հյուրեր ընդունելը կամ ճանապարհելը»[4]: Գերդաստանական մնացուկների վերաբերյալ Խ. Աբովյանի վկայությունները լրացվում են հայ գյուղագիրների երկերում տեղ գտած ազգագրական նյութերով: Չնայած գերդաստանում տիրող սովորութային իրավունքին՝ ընտանիքի գլուխ կանգնած ծերունու մահը բոլոր անդամների համար սուգ էր: Սրտառուչ է, որ 50-60 տարեկան որդիները՝ բազմաթիվ երեխաների հայր, սգում էին, ասելով. «Մեր տան սյուները քանդվեցին, ո՞վ է մեզ կառավարելու և սանձահարելու... Այժմ մենք նման ենք մի տակառի, որի կափարիչը չկա...»[5]:

Հայտնի է, որ նահապետի մահից հետո նրա գործառույթներն անցնում էին ավագ եղբորը, որը «բռնում է նրա տեղը ... նրա կնոջը կանչում են **մեծ նան** և բացի տնտեսությունից, որ նա վարում է, ուրիշ իրավունքներ չուներ: Իրենց իսկական մորն անվանում էին **փոքր նան** (ընդգծումները՝ Խ. Ա.) և նրանց բոլոր երեխաներն, առանց

[1] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 561:
[2] Նույն տեղում, էջ 563-564:
[3] Նույն տեղում, էջ 564:
[4] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 561:
[5] Նույն տեղում, էջ 565:

տարբերության, քույր ու եղբայր են»[1]: Խ. Աբովյանը հավաստիացնում է, որ «մեր օրերում ընտանիքը այդպես է, ինչպես նկարագրեցինք, նրանց թիվը 10-40-50 հոգու է հասնում: Իմ հայրը մի եղբայր ուներ, երկուսն էլ շատ երեխաներ են թողել, չնայած դրան, մեր ընտանիքը 12 հոգի էր»[2]: Ակնհայտ երևում է, որ 19-րդ դ. առաջին կեսին մեծ ընտանիքներում խիստ ընդգծվում էին ազգակցական կապերը, որ ղեկավարվում էր դարերից եկող սովորութային իրավունքի նորմերով: Խ. Աբովյանը վկայում է, որ «Այս կենցաղը տարածված է մեր բոլոր գավառներում, մինչև իսկ Քանաքեռում: Բերում է 1805 թ. ընդամենը մի գիշեր Բայազետի հայ գերդաստաններից մեկում հյուրընկալված Ֆրանսիայի դեսպանի վկայությունները, որ հստակ պատկերացում են տալիս ներընտանեկան հարաբերությունների մասին»[3]:

Մեծ ընտանիքներում «Ծնողները հարսներին **աղջիկ** են կանչում (ընդգծումը՝ Խ. Ա.) քանի դեռ ջահել են, իսկ տոհմի անունով՝ երբ տարեց են, այն էլ հետևյալ կերպ. այս ինչի թոռ, բայց ոչ երբեք նրանց մկրտության անունով»[4]: Խ. Աբովյանը չի շրջանցել գերդաստանի ներփակ կյանքում ընտանիքի անդամների ճաշելու կարգը, որը ընդհանրական է եղել հայերի կենցաղում և կիրառվել է ընդգծված հետևողականությամբ: **Ճաշելիս**,- գրում է Խ. Աբովյանը,- «Տան առավել տարեց անդամները և նրանց հետ ավելի երիտասարդներն իրենց կանանցով, նստում են մի կողմում, դեմքերը մեծ մասամբ հակառակ կողմը դարձրած, որտեղ նստում են ծերունիները: Տատը մեծ մասամբ կանգնած է ծերունու դիմաց, որպեսզի վերջինս չտեսնի, թե ինչպես են ուտում մյուսները: Երիտասարդ կանայք և աղջիկները, անկախ ծերունու ներկայությունից, **մեզ մոտ կանոն է** (ընդգծումը՝ Ա. Պ.), որ նրանք մի ձեռքը միշտ դնում են բերանին: Նրանց ձայնը այնքան ցածր է, որ փսփսոցի է նմանվում: Երեխաներն այս ամենից բացառություն են կազմում»[5]: Ավանդական հացկերույթի նման կատարյալ նկարագրությունների քիչ կարելի է հանդիպել գյուղագրական և գեղարվեստական գրականության մեջ[6]:

Նույնքան կատարյալ են գերդաստանում երեխայի խնամքի, օրորոցի, **ճոճի** հետ կապված նկարագրությունները, որոնք թողնում են կենդանի տպավորություն: Մոր աջ կողմում,- գրում է Խ. Աբովյանը,- դրված է երեխայի օրորոցը, որի աղեղնաձև երկու փայտերը ծառայում են որպես ոտքեր՝ հեշտացնելով օրորոցի շարժվելը: Այն ունի շատ նախշեր, իսկ մոր օրորոցային երգն անպակաս է[7]: Խ. Աբովյանը տվել է ճոճի պատրաստման հետևյալ անզուգական նկարագրությունը: Երկու ծառերից կապում են մի երկար պարան, ծայրերը իրար միացնում, որի շնորհիվ ստացվում է երկու կողմ, իրար զուգահեռ՝ մի փոքր բացվածքով: Պարանի երկու ծայրերին կապում են ամուր շոր, այնպես որ պարանի ներքևում հարթ է մնում, շորի բոլոր ծայրերը հավասար կերպով հագցնում են պարանի վրա: Այնուհետև, հավասար երկարությամբ երկու հաստ փայտե կտոր են դնում ճոճի գլխի և ոտքերի կողմը: Դրա վրա փռում են երեխայի անկողինը, ապահովության համար երեխային թեթևակի կապում են ճոճից:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 566:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 366:
[4] Նույն տեղում, էջ 563:
[5] Նույն տեղում, էջ 565:
[6] Թերևս բացառություն է Ռաֆֆու թողած անզուգական նկարագրությունը պարսկահայերի ճաշելու կարգի մասին (տե՛ս **Ա. Պետրոսյան**, Ռաֆֆու պարսկական ուղևորությունները որպես պարսկահայերի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր, ՊԲՀ, 2007, թիվ 3, էջ 110):
[7] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 569:

Մի քանի անգամ ճոճելուց հետո այն սկսվում է ինքնուրույն ճոճվել: Հաճախ ճոճից կապում են պարան, նստում որոշ հեռավորության վրա, ոտքով կամ ձեռքով, առանց աշխատանքից կտրվելու օրորում[1]: Աղմուկ լիովին չկա, իսկ խաղալիքները կախում են տերևներից, մաքուր օդն ու բնությունը նպաստում են երեխայի քնին: Խ. Աբովյանը վկայում է, որ «ինքս եմ մեծացել» նման օրորոցում և շատ բան զգացել: Ուշագրավ է, որ 10-12 տարեկան հիվանդ երեխաներին նույնպես խնամել են նման ճոճ-օրորոցում, որպեսզի «քաղցր քուն ապահովեն»: Խորհուրդ է տալիս նման ճոճ պատրաստել նաև տանը, «պարանը պատից-պատ ձգելով»[2]: Այս կարգի նյութերը գրառելիս հեղինակը ցանկացել է ոչ միայն հիշել իր մանկությունը, այլև ապագա սերունդներին թողնել ճոճ-օրորոցի վերաբերյալ ուշագրավ մանրամասներ:

բ) **Տնտեսական կենցաղ**: Չնայած հակիրճ, սակայն այս ոլորտի վերաբերյալ ևս Խ. Աբովյանը թողել է ուշագրավ վկայություններ: Ինչպես այլ գյուղագիրների, այնպես էլ Աբովյանի գրառումների համաձայն գյուղացին միս կամ յուղալի կերակրատեսակներ հազվադեպ է օգտագործել: «Պահող օրերին ուտում են մածուն, եփած ձուկ, բրինձապուր կամ չոր հացի մեջ փաթաթված կանաչեղեն»[3]: Նա անդրադարձել է մածուն մերելու և կարագ ստանալու ժողովրդական եղանակներին: **Մածուն** ստանալու համար թարմ կաթը եռացնում են, որից հետո թողնում այնքան, որ գոլանա, այնուհետև մեջը մի գդալ հին մածուն են լցնում: Երեք-չորս ժամ հետո այն վերածվում է թանձր զանգվածի, որը շատ համեղ է և սննդարար: Չմռանը մածունն ավելի համեղ է լինում, քան ամռանը, քանի որ ջրային մաս քիչ է պարունակում: **Կարագ** ստանում են խնոցու միջոցով,- գրում է Խ. Աբովյանը,- որի երկու կողմերը փակ են, իսկ մեջտեղը մի անցք կա: Մածունն այս անցքով ներս են լցնում, վրայից էլ գոլ ջուր, փակում են անցքի բերանը, խնոցին երկու պարաններով կախում առաստաղի հեծաններից: Խնոցու երկու ծայրերին խոռոչներ են փորված, կամ ծայրերը բարակ փայտով օղակված են, որ պարանը դուրս չգա: Երկու հոգի բռնելով պարաններից՝ հորիզոնական դիրքով այնքան են շարժում, որ միջի զանգվածը լուծվի: Ժամանակ առ ժամանակ անցքից նայում են՝ գդալով մի փոքր վերցնելով խնոցու զանգվածից: Կարագը պահում են կավե ամաններում, իսկ թանից թանապուր պատրաստում: «Խնոցու գործածությունը շատ տարածված է, տվեցի գյուղական վայելքները, ինչպես կա»,- եզրափակում է Խ. Աբովյանը[4]:

Ուշագրավ են **թթենու, թութ թափ տալու և այգեկութի** մասին Խ. Աբովյանի գրառումները, որոնք խոսում են այն մասին, թե նա ինչքան քաջատեղյակ էր գյուղացու տնտեսական կենցաղի այս ոլորտներին: Հեղինակը գրում է. «Ուզում եմ խոսել թութ թափ տալու և այգեկութի մասին, որ ոչ մի միրգ ավելի վաղ չի հասունանում, քան թութը և ոչ մեկն ամենից ուշ չեն հավաքում, քան խաղողը»[5]: Նախքան թթի հասնելը յուրաքանչյուր ընտանիք բրդի կամ բամբակի կտորներից կարում է քառակուսի, ուղղանկյուն սփռոց: Դա հատկապես այն ընտանիքներում է ընդունված,

[1] Նույն տեղում, էջ 572:
[2] Նույն տեղում, էջ 573: Զավախքի հայերի կենցաղում օրորոցի պատրաստման, օգտագործման մասին ուշագրավ վկայություններ է թողել Հովի. Մալխասյանը (տե՛ս **Հովի. Մալխասյան**, Հայ գեղջուկի ալբոմը, ԱՀ, գ. Զ, թիվ 1, Թիֆլիս, 1898, էջ 217-229):
[3] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 583:
[4] Նույն տեղում, էջ 584: Խնոցի հարելու, կարագ ստանալու վերաբերյալ անփոխարինելի են Հ. Ճուղուրյանի գրառումները (տե՛ս **Հարություն քահանա Ճուղուրյան**, Շիրինանց նախշունը, Թիֆլիս, 1911, էջ 131-132):
[5] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 586:

որոնք ունեն հարյուր և ավելի թթենու ծառեր: Թութ թափ տալու համար պահանջվում է հինգ մարդ: Մի տղամարդ կամ կին կացինը ձեռքին բարձրանում է ծառը: Մինչ այդ նա, «մի քանի անգամ խաչակնքել է և Աստծուն ապավինել: Այս աղոթքը արվում է միայն առաջին ծառը բարձրանալիս, սկսելով ստորին ճյուղերից»[1]: Չորս մարդ սփռոցի ծայրերից բռնած կանգնում են այն ճյուղի տակ, որին ծառի վրա եղած անձը հարվածելու է կացնի հակառակ կողմով: Կացնի թույլ հարվածների շնորհիվ «անձրևի տարափի նման թափվում է» բերքը սփռոցին՝ թրջելով ներքևում կանգնածներին: Սփռոցն արագ դատարկում են, թե չէ հյութը սփռոցից կհոսի: Ծառերը թափ են տալիս 5-6 անգամ նույն եղանակով: Թութը չորացնում են, օգտագործում որպես քաղցրավենիք, ստանում դոշաբ և օղի[2]:

Նույնչափ ուշագրավ են Խ. Աբովյանի այն հաղորդումները, որոնք վերաբերում են **այգեկութին**: Մեծ այգիներ ունեցողը հրավիրում է ազգականներին և հարևաններին՝ չասելով, թե ինչու է կանչել, քանի որ «Տարվա այդ եղանակը հասկանալի է դարձնում» կանչի նպատակը: Հրավիրվածները կանայք են իրենց երեխաներով, իսկ տղամարդ հազվադեպ է լինում: Այս նպատակի համար այգու տերը պահում է այծ, գառ կամ ոչխար՝ այգում մորթելու և հյուրասիրելու մասնակիցներին[3]: Հյուրերը գալիս են վաղ առավոտյան իրենց կողովներով ու դույլերով: Արվում է աշխատանքի բաժանում՝ տարեցները կտրում են ողկույզները, իսկ տղաները դրանք լցնում են գլխներին դրված կողովի մեջ: Երբ կողովները լցնում են, շուռ են տալիս մեծ կողովների մեջ, իսկ տղամարդիկ տեղափոխում են հնձան: Բոլորի ձեռքերը զբաղված են, բայց լեզուներն ազատ, ուստի սկսվում են կատակը և սրախոսությունները: Այդ օրը վարձում են «զվարճախոսներ, աճպարարներ ու գուսաններ»: Երեկոյան տուն վերադառնալիս խաղողաքաղի մասնակիցները տանում են խաղողով լի կողովները: Ինչքան էլ մաքուր հավաքեն, վազերի վրա մնում է մեծ քանակությամբ խաղող, որից հետո օտարները կարող են մտնել այգի և **ճռաքաղ** անել: Դա առավել արդյունավետ է ընկույզի ծառերի համար[4]:

գ) **Ժողովրդական հավատալիքներ և տոներ**: Չնայած այս ոլորտի վերաբերյալ Խ. Աբովյանի վկայությունները բավական սուղ են, սակայն կարևորվում են որոշ **հավատալիքների** ու տոների հետ կապված առանձին հարցերի ուսումնասիրման առումով: Անդրադառնալով թռչունների հետ կապված ժողովրդական հավատալիքներին՝ Խ. Աբովյանը գրել է. «Մեզ մոտ գոյություն ունի այն հավատը, թե... թռչունները, որոնց միշտ զույգ են հանդիպում ... այլևս կանաչ ծառի կամ խոտի վրա չեն նստի, հենց որ նրանցից մեկը մեռնի: Այդպիսի դեպքերում նրանք նստում են դաշտի քարերի կամ բոլորովին չորացած մի խոտից խոտ, ծառից ծառ փախչում՝ միշտ անբաժան, զույգ-զույգ և ամեն անկյունում հնչում է նրանց միապաղաղ ձայնը»[5]: Այստեղ ուշագրավ է մենակ մնացած թռչունի՝ **դաշտի քարի** կամ **չորացած ծառի** վրա նստելու գաղափարը, ի հակադրություն զույգի՝ **կանաչ ծառի** կամ **խոտի վրա** հանգրվանելուն:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 587:
[3] Նույն տեղում:
[4] **Խ. Աբովյան**, նշվ. աշխ., էջ 588: Ճռաքաղի փոխարեն առավել տարածված է **պաշաղ անել** արտահայտությունը (տե՛ս **Ա. Պետրոսյան**, ԴԱՆ):
[5] Նույն տեղում, էջ 590:

Հետաքրքիր են «արծագանքի կամ էխոյի» վերաբերյալ հետևյալ գրառումները. «Հայերը հավատում են,- գրում է Խ. Աբովյանը,- որ արծագանքը կամ էխոն ոգիների ձայնն է, որի հեղինակը ... անտեսանելի թաքնվում է շրջակայքում՝ քարայրների մեջ: Այդ պատճառով էլ արծագանքը նրանց սարսուռ է ազդում»[1]: Խ. Աբովյանը հակիրճ կերպով կանգ է առել **օձերի** նկատմամբ քանաքեռցիների մեջ պահպանված հավատալիքներին: Այգիներում եղած օձերին եթե «չդիպչեն, ապա վնաս չեն տա: Հավատում են, թե օձերը տան պահապաններն են»[2]:

Ըստ Խ. Աբովյանի ձմեռը քանաքեռցիների հանգստի ու վայելքի շրջանն է, երբ փոխադարձ այցելությունները, խրախճանքներն անպակաս են: Տարածված ճաշատեսակներն են փլավը, խորովածը, եփած միսը, տապակած ճուտը, ձվից ու մրգերից պատրաստած տարբեր ուտեստները, աղ դրած ձուկը և այլն: Կանայք իրենց խրախճանքը կազմակերպում են մառանում, հաճախ գինու կարասների մոտ: Այդ խրախճանքներն ընդգծվում են հատկապես Նոր տարվա, Ծննդի և Զատիկի տոնակատարություններին: Զատիկին իրար նվերներ են տալիս, կարմիր ձու նվիրում, եթե մեկը հիվանդանում է **մատաղ** են անում՝ գառ կամ ոչխար մորթում, միսը բաժանում հարևաններին: Մատաղ ստացողն ասում է. «Աստված ցանկությունդ կատարի», իսկ մատաղատերը պատասխանում է՝ «Աստծո մատաղ է»[3]:

Ժողովրդական տոներից Խ. Աբովյանը հատկապես անդրադարձել է **Կաղանդին**: «Բացի սովորական նոր տարուց, հայերն ունեն իրենց սեփական նոր տարին, որն ընկնում է ուշ աշնանը: Դա կոչվում է Կաղանդ», որի ժամանակ անում են մի շարք ծեսեր: Նա գրի է առել **երդիկից պարկ կախելու**, ապագան գուշակելուն նվիրված որոշ ծեսեր: Կաղանդին նախորդող երեկոյան, ողջ ընտանիքը հավաքվում է սեղանի շուրջը և «սպասում տարօրինակ այցելուի», որի դերը կատարում են պատանիներն ու երիտասարդները: 5-6 հոգիանոց խմբեր կազմած մտնում են մարդկանց տները, ոչ թե դռնից, այլ երդիկից: Նրանք վերևից կախում են պարկը, իսկ ներքևում եղածները պետք է այն լցնեն քաղցրավենիքով: Ներսի մարդիկ պահում են պարկը, վերևում կանգնածներից պահանջում ասել իրենց սիրածների անունները: Վերևում եղածները խուսափում են, քաշում պարկը և հեռանում: Երբեմն պարկի մեջ քար, փայտ կամ ջուր են դնում, վերև հանելով պարկը դատարկում են և կրկին ներքև իջեցնում: Դա կրկնում են մի քանի անգամ, մինչև ստանան իրենց ցանկացածը: Հաջորդ օրը պարզվում է, թե ովքեր են եղել խմբում[4]: Կաղանդին,- գրում է Խ. Աբովյանը,- մեծ ու փոքր իրար դիմելով ասում են. «Շնորհավոր նոր տարի և կաղանդ», իսկ երիտասարդ աղջիկները փորձում են գուշակել իրենց բախտը: «Կերակրի առաջին գդալը նրանց ապագա փեսացուի գուշակն է, որը դնում են դրսում, սպասում, թե թռչունը գդալի պարունակությունը որ կողմ կտանի: Ըստ հավատալիքների, այդ կողմից էլ գալու է իր սիրածը և իրեն տանի»[5]: Զույգերը որպես «փոխադարձ համակրանքի նշան» վարդեր են փոխանակում:

Այսպիսով, Խ. Աբովյանի կողմից գրառված երդիկից պարկ կախելը, ճաշով գդալը դրսում դնելը, աղի բլիթ ուտելն ու ջուր չխմելը բավական ուշագրավ են և

[1] Նույն տեղում, էջ 589:
[2] Նույն տեղում, էջ 579:
[3] Նույն տեղում, էջ 591-593:
[4] Նույն տեղում, էջ 594:
[5] Նույն տեղում, էջ 595:

կան նաև մասնագիտական, գյուղագրական գրականության մեջ: Դրանք գրի են առնված ռեալ իրականությունից և արժանահավատ են:

Анушаван Петросян, Работа Хачатура Абовяна "Строение сельских домов" как первоисточник этнографии канакерцев. - Статья является органичным продолжением ряда этнографических исследований, посвященных Х. Абовяну. В первом разделе работы Х. Абовян на примере своего отцовского дома описал интерьер хацатун-тонратуна, обстановку, стол-курси, традиционный порядок приема пищи и отдыха, кровлю жилища, гостинную, погреб или хранилище фруктов, стойло, сарай.

Вторую часть работы он посвятил семейному быту канакерцев, нормам традиционных прав, действующих в больших семьях. Обратился к сбору шелковицы, народным способам обработки шелковицы и молока, сбору урожая, поверьям и праздникам.

Anushavan Petrosyan, Khachatur Abovyan's article "The structure of rural houses" as an ethnographic source. - The article is an integral continuation of the research series dedicated to Abovyan's works. In the first part of the article Abovyan describes the interior of tonirplace, furniture, table -kursi, traditional ways of dining and sleeping, the roof of the house, the guestroom, the cellar or fruit larder, the barn and the mow based on the example of his paternal house.

The second part discusses family lifestyle, the customary legal norms functioning within the families. It reflects on mulberry gathering, people's ways of processing milk and mulberry, the harvesting, beliefs and holidays.